ՄԻ ԼՐԱՑՈՒՄ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆ ՏՈՀՄԱԾԱՌԻՆ

Ա. Բ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

XVII—XVIII դարերի հայ գեղանկարչության նշանավոր ներկայացուցիչ Նաղաշ Հովնաթանը, ինչպես նաև նրա տոհմի մյուս ներկայացուցիչները ճանաչված են նաև հայ ուշ միջնադարի մանրանկարչական արվեստում ներդրած իրենց ավանդով։ Նրանց մասին եղած սակավ տվյալները ուսումնասիրողներին հնարավորություն չեն տվել ամբողջական պատկերացում կազմելու տոհմի որոշ նկարիչների գործունեության վերաբերյալ։ Ն. Ակինյանը անդրադառնալով Հովնաթանյաններին գրում է. «Թէ ունէ՞ր Յովնաթանյան եղբայրներ ալ, այս մասին ճշգրիտ տեղեկություն չեմ գտած»[1]։ Այս առումով որոշակի կարևորություն են ստանում վերջին տարիներս Մատենադարանում Հովնաթանյանների անուններով բացահայտված մատյանները[2], որոնք գալիս են հարստացնելու նշանավոր տոհմի վաստակի մասին մեր ունեցած տեղեկությունները և նպաստելու որոշ հարցերի պարզաբանմանը։ Նորահայտ մատյանների շնորհիվ պարզվել է, որ Նաղաշ Հովնաթանի հայրը ոչ թե Վարդանի որդի Հովհաննես վարդապետն է, այլ Գրիգորի որդի Հոհանը, որը գրել ու նկարազարդել է ձեռագրեր։ Հայտնի դարձավ նաև Հովնաթանի ավագ եղբայր Մարգարը, որը նույնպես գրիչ ու մանրանկարիչ էր։ Գրչության արվեստով է զբաղվել նաև Հովնաթանի հորեղբայր Թադեոսը։

Հիշյալ անունների կողքին Հովնաթանյան տոհմածառը հարստանում է նաև այլ նոր անուններով։ Այդ առումով ուշադրության արժանի է Նաղաշ Հովնաթանի տաղերի ժողովածուն, ընդօրինակված 1767 թ.։ Ձեռագրի գրիչներն են ազուլեցի Հայրապետը և նրա եղբայրը՝ մահդասի Հակոբը[3]։

Հիշյալ ձեռագրում Նաղաշի և նրա որդու տաղերից բացի ընդօրինակված են նաև այլ տաղերգուների (Հովհ. Դաշտեցի, Գաբրիել, Սա. Շոռոթեցի, Պաղտասար դպիր, Սարգիս Ակնեցի, Ղարիբ աբեղա, Ստեփ. վրդ., Ղազար Ջահկեցի, Ավետիք Շոռոթեցի) գործեր։ Ձեռագրի գրիչները ժողովածուն անվանել են «Գիրք որ կոչի տաղարան Հովնաթանին»։ Հիշատակարանում նրանք գրում են. «Արդ, եղբարք իմ սիրելի, այս հարուստ և գովելի տաղարանս որ հանդիպիք, կամ ընթեռնուք, յիշեցէք շոռոթեցի Նաղաշ Յովնաթանըն և իւր Յակոբջանըն, որ են ննջեցեալ։ Այլ և յիշեցէք և ձեր ամենեցուն ծառայ Հայրապետ գրիչս, որ բազում աշխատեցի՝ գրեցի այս տաղարանս։ Յիշեցէք յանդուցեալ հայրն իմ՝ Մարգարն և մայրն իմ Մարիամն և քոյրն իմ՝ Անթասանըն և Աննմանն և Նինան և Յուսումըն և կենթանի սիրական (սիրելի— Ա. Գ.) իմ մայակսի Յակոբջանըն...»[4]։

Ինչպես տեսնում ենք, ժողովածուի մեջ ընդգրկված այլ տաղերի հեղինակների մասին գրչի հիշատակարանում ակնարկ չկա, հիշատակվում են միայն Շոռոթեցի Նաղաշ Հովնաթանը և նրա որդի Հակոբջանը։ Այս հանգամանքը մեզ մտածել է տալիս. արդյոք որևէ կապ չկա՞ ազուլեցի գրիչ Հայրապետի և Հովնաթանյան տոհմի միջև։ Կարծում ենք, որ Մարգարի որդի ազուլեցի գրիչ Հայրապետը պետք է որ Նաղաշ Հովնաթանի եղբայր Մարգարի որդին լինի։ Այդ է հաստատում նաև Հայրապետի մի բանաստեղծությունը, որի տողերի սկզբնատառերը կազմում են հեղինակի անունը՝ «Հայրապետ»։ Բանաստեղծությունը նվիրված է դարձյալ Նաղաշ Հովնաթանին.

---

1 Ն. Ակինյան. Հովնաթան Նաղաշ և Նաղաշ Հովնաթանյանք և իրենց աշխատությունք.—«Հանդես ամսօրյա», 1911, էջ 390։

2 Ա. Գևորգյան. Հովնաթանյան տոհմի նորահայտ մանրանկարիչներ, ՊԲՀ, 1982, № 2, էջ 72։

3 Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 4426։

4 Նույն տեղում, էջ 121 բ.։

Հայեցէք, եխպարք պատվական
Ասէք տաղերս քաղցրաձայն,
Ցիշեցէք Նաղաշ Յովնաթան,
Բարունի է խիստ գովական,
Այս հոգէւոր և մարմնական.

Պինտ լցրէք գոլուն վերչական,
Ելէք ասէք Սաղմոսք Դաւթեան,
Տեսէք ձեր տունն հօքեկան
Ձեր է աշխարհքս և ընթունայնն։

Հայրապետը ձեռագրում կատարել է նաև որոշ նկարագարդումներ։ Դրանք բուսական դարդեր են՝ նռան թփեր, ծաղիկներ, որոնք նկարված են ավելի կոպիտ և չեն համապատասխանում Հովնաթանյանների գեղանկարչական արվեստին։ Նրա օգտագործած դույները, որոնցում գերիշխում են թանձր կարմիրը, կանաչն ու նարնջագույնը, դարձյալ հեռու են Նաղաշի օգտագործած ներբերանգներից։ Որ իսկապես այդ ծաղկանկարները գրիչ Հայրապետինն են, հաստատում են նրա բանաստեղծության շուրջը կատարված նույն ոճի ծաղկազարդերը.

Ես ձեր ծառայ եմ և տկար
Մարգարի որթի եմ Հայրապետ
Ով սիրելիք որ հանդիպիք,
Մեղավորիս էլ յիշեցէք
Վարցն Աստուծոյ առնիցէք. ամէն։

Ձեռագրում կա պատկերագրական հետաքրքիր շարք, կատարված անհայտ նկարչի ձեռքով։ Նկարաշարն ունի աշխարհիկ և կրոնական մանրանկարներ։ Ձեռագիրն ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում են եղել միայն աշխարհիկ նկարները, որոնք հրատարակվել և շրջանառության մեջ են գտնվել։ Մինչդեռ, չափազանց կարևոր են նաև կրոնական թեմաներով պատկերները՝ «Աստվածամոր թագադրումը» և «Գրիգոր Լուսավորչի տեսիլքը»։ Հենց այս երկու նկարների մասնակի քննարկումը հնարավորություն է տալիս նախ՝ բացահայտելու նկարների ավանդական աղբյուրները Հովնաթանյանների գեղանկարչության հետ և ապա՝ խորհելու ձեռագրի անհայտ նկարչի մասին։

Ավետարանական կանոնիկ պատկերաշարում «Թագադրումն Աստվածամոր» նկարը չի հանդիպում, քանի որ այդ մասին Ավետարանում չի հիշատակվում։ Սակայն հայկական «Անկանոն գրքում» ասվում է, որ Աստվածամոր վերափոխումից հետո Պողոս առաքյալը Պետրոս առաքյալի հանձնարարությամբ իր մխիթարական խոսքն է հղում ժողովրդին, նշելով վերափոխված Աստվածամոր բաղում բարեխոսությունների մասին։ Նա իր խոսքն ավարտում է այսպես. «Զյաղթութեան պսակն ի գլուխ կապիցէն պայծառապէս»[8]։ Կարծում ենք, որ այս նախադասությունում ակնարկվում է Տիրամոր թագադրումը։

Այդպիսի պսակի էին արժանացել նաև սուրբ կույսերը՝ իրենց նահատակության առթիվ։ Այդ մասին կան վկայություններ սրբերի վարքերում։ Այսպես. Սանատրուկ թագավորի դուստր կույս Սանդուխտը, ընդունելով քրիստոնեությունը, հոր հրամանով դատապարտվում է մահվան։ Թագեոս առաքյալը Սանդուխտին հայտնում է. «Ուրախացիր դուստր, որովհետև շուտով Տերը լուսեղեն պսակ է դնելու քո գլխին»[9]։ Այս պսակը դարձյալ նահատակության և քրիստոնեության հաղթանակի խորհուրդն էր։

Աստվածամոր թագադրման թեմայով պատկերներ հանդիպում են XII—XIII դդ. Արևմուտքի արվեստում, որտեղ ընդունված է Աստվածամորը կոչել «Երկնային թագուհի»[10]։

---

5 ՄՄ, ձեռ. 4426, թ. 121։

6 Նույն տեղում, էջ 2։

7 Ն ա ղ ա շ Հ ո վ ն ա թ ա ն. Բանաստեղծություններ, կազմեցին՝ Ա. Մնացականյան, Շ. Նազարյան. Երևան, 1951։

8 Թանգարան հայկական հին և նոր գրականեանց. գ. Բ, Վենետիկ, 1898, էջ 474։

9 Վկայաբանութիւն Սանդուխտ կոյսի.—Ցայսմաւուրք. Կ. Պոլիս, 1834, Բ, էջ 292—293։

10 Zexikon der christlichen ikonographie. Wien, 1971, B. 3, S. 87.

Հայկական պարականոն մանրանկարներում այդ պատկերների որոշ տարբերակներ մուտք են գործել ավելի ուշ՝ XVII—XIX դդ. ձեռագրերում։ Սրանք կրում են Արեւմուտքի ազդեցությունը։ Նկարիչներ Մեսրոպ դպիրի և Պողոսի 1607 թ. Խիզանում նկարազարդած Ավետարանի պատկերաշարում կա «Թագադրումն Աստվածամոր» նկարը։ Սա այն տարբերակն է, որտեղ թագադրումը կատարվում է Սբ. Երրորդության միջոցով։ Նկարն ունի հետևյալ մակագրությունը. «Երրորդական անձնաւորութիւն Հայր և Որդի և Սուրբ Հոգին պսակէ Սուրբ Կոյսն Աստուածածին Մարիամն բրաբիոն պսակաւն»11։ Այս տողերը կարծես արձագանքում են Պողոս առաքյալի վերը հիշված խոսքին. «Զյաղթութեան պսակն ի գլուխ կապիցէն պայծառապէս»։

Հետաքրքրական է նկարիչների մակագրության մեջ նշված «բրաբիոն պսակաւ»-ը։ Ի՞նչ էր իրենից ներկայացնում այդ «բրաբիոն պսակը»։ Բրաբիոն (հունարեն վռավիոն) նշանակում է հաղթանակ, մրցանակ, վարձ հաղթության և նաև՝ շուշան ծաղիկ12։

Շուշանը, որպես հաղթության խորհուրդ, հայ արվեստում հայտնի է եղել դեռևս վաղ քրիստոնեության շրջանում։ Ավանի վաղ քրիստոնեական եկեղեցու մոտ կանգնեցված քառակող կոթողի վերին մասում քանդակված խաչի չորս անկյունները զարդարված են շուշաններով13։ Այստեղ պետք է հիշել Պողոս առաքյալի խոսքը. «Հավատացյալի վերջին հաղթանակը խաչի նշանով պիտի փառավորվի»14։ Ուրեմն կոթողի շուշանները խաչի հաղթանակի խորհուրդն են։

XIX դարի ծաղկող Սիմեոն Բղնունին ունի մի ձեռագիր, որ կոչվում է «Գիրք ծաղկանց բուրաստանի»։ Ամբողջ ձեռագիրը նկարչի հորինած ծաղիկների օրինակներ են։ Նկարված է նաև բրաբիոն-շուշանը, որի մոտ նկարիչը գրում է.

Բրաբիոն ծաղիկ նման ես կուսից,
Հոգովդ անուշիկ, որք առ քեզ մերձենա
Պարտ են լինել շատ զգուշիկ15։

Հաղթանակի խորհուրդն է կրում նաև ուշ շրջանի ավետարաններում «Ավետումն» պատկերում Գաբրիելի ձեռքի շուշանը՝ ի նշան Տիրոջ կողմից Աստվածամորը արվելիք այն ավետմանը, որ պետք է ծնվի Քրիստոսը և հաղթանակի քրիստոնեությունը։ Այդ մասին դեռևս XII դարում Ներսես Շնորհալին գրում է.

Այսօր Գաբրիէլ հրեշտակապետն եկեալ,
Բերեալ բրաբիոն պըսակ յաղթող կուսին16։

Աստվածամոր թագադրմանը նվիրված պատկերներ կարելի է տեսնել նաև XVIII—XIX դդ. հայ գեղանկարչական արվեստում։ Անանուն նկարիչների, նաև՝ Հովնաթանյանների հաստոցային ստեղծագործություններում դրանք որոշակի աղերսներ ունեն ուսումնասիրվող ձեռագրի Աստվածամոր պատկերի հետ։ Հատկապես հորինվածքային առումով բավականին մոտ կապ է նկատվում Սբ. Էջմիածնի Մայր Աթոռի գանձատանը պահվող անհայտ նկարչի 1771 թ. «Թագադրումն Աստվածամոր» գեղանկարի հետ, որն ինչպես տեսնում ենք, ավելի ուշ է նկարվել։ Այսինքն դարձյալ հաստատվում է, որ ձեռագրի նկարի համար գաղափար օրինակ պետք է լիներ Նաղաշ Հովնաթանի պատկերածը։

Ուշադրության արժանի է մեր ձեռագրի «Աստվածամոր թագադրումն» և Հովնաթան Հովնաթանյանի «Թագակիր Աստվածամայրը» և «Թագադրումն Աստվածամոր» նկարների համեմատությունը։ Այս նկարներում նկատվում են Աստվածամոր կեցվածքի, մանկան դիրքի, նրա ձեռքի խաչով գնդի, նրանց հագուստների գունային լուծման նույնությունները։ Տարբերությունը

11 ՄՄ. ձեռ. 6785, էջ 33բ։

12 Հայկազյան բառարան, տե՛ս բրաբիոն։

13 Խ. Մեչյումյան, Վ. Ղազարյան. Վաղ քրիստոնեական կոթող Ավանում (զեկուցում կարդացված Հայ արվեստին նվիրված 7-րդ հանրապետական գիտական կոնֆերանսում, Երևան, 1995)։

14 Վաչե վրդ. Իգնատիոսյան. Բարեխոսութիւն սրբոց. Երևան, 1993։

15 ՄՄ., ձեռ. 6216։

16 Ա. Քյոշկերյան. Ներսես Շնորհալի, տաղեր և գանձեր. Երևան, 1987, էջ 159։

Աստվածամոր երկու կողմերում կանգնած սրբերի մեջ է. ձեռագրում պատկերված են ձախում՝ Ստեփանոս Նախավկան տաճարի մանրակերտը ձեռքին, իսկ աջում՝ Հովհաննես ավետարանիչը ձեռքին գավաթ։ Հովնաթան Հովնաթանյանի մոտ՝ աջում Տիրոջ եղբայր սբ. Հակոբն է, որը ձեռքում պահել է գլխատման խորհրդանիշը, իսկ ձախում՝ Հովհաննես առաքյալն է, ձեռքին սկիհ։

Այս նկարը նույնպես խորհուրդն է քրիստոնեության հաղթանակի, քանի որ թե՛ մանուկ Քրիստոսը խաչով և թե՛ Աստվածամոր կողքերին կանգնած սուրբ նահատակները այդ են հաստատում։

Ձեռաղրում պատկերված հաջորդ հորինվածքը նվիրված է Գրիգոր Լուսավորչի տեսիլքին։ Նկարի վերին աջ անկյունում Քրիստոսն է, ձեռքին «ձող չափ» կամ ինչպես տեսիլքում է ասված՝ «Ոսկեղեն ուռը»։ Կենտրոնում տաճարն է, որից ձախ Գրիգոր Լուսավորիչն է ծնկաչոք, իսկ նրա մոտ կանգնած հրեշտակը Լուսավորչին ցույց է տալիս նրա տեսիլքով կառուցված տաճարը։ Ձեռագրում այս նկարին վերաբերող բանաստեղծության մեջ ասվում է.

...Ցափեալ զուգեր և նկարէր
Եւ իր աղգաց առներ անդին
Առն Աստուծոյ Գրիգորին[17]։

Հորինվածքի մեկ այլ ուշագրավ տարբերակը հանդիպում է XVI դարի մանրանկարիչ Վարդան Բաղիշեցու մոտ[18]։ Հակոբ և Հարություն Հովնաթանյան եղբայրների նկարազարդած Հայսմավուրքի լուսանցքում պատկերված Լուսավորչի տեսիլքը[19] նույնությամբ ընդօրինակել է Հովնաթան Հովնաթանյանի որդին՝ Մկրտումը[20]։ Ինչպես տեսանք, ձեռագրի ավարտման ժամանակը 1765 թվականն է, երբ այլևս չկային Նաղաշ Հովնաթանը (մահացել է 1721 թ.) և Հակոբը (մահացել է 1757 թ.)։ Ուրեմն ո՞վ կարող էր նկարազարդած լինել ժողովածուն։ Այս հարցը ժամանակին մտահոգել է նաև Գարեգին Լևոնյանին։ Նա գրում է. «Իսկ ո՞վ է այդ տաղարանի նկարների հեղինակը կամ ավելի ճիշտ ընդօրինակողը, այդ մասին Հայրապետը ոչինչ չի ասում։ Նկարողն անշուշտ իր ձեռքի տակ է ունեցել Հովնաթանի նախնական օրինակը. նրա իսկ նկարներով և ընդօրինակել է սկզբնաղբյուրից»[21]։ Գ. Լևոնյանին հայտնի չի եղել այն աղգակցական կապը, որ գոյություն է ունեցել Հայրապետի և Հովնաթանյան տոհմի միջև։ Իսկ մեզ մտածել է տալիս. արդյոք Հայրապետը Հովնաթան Հովնաթանյանին չի՞ դիմել նկարազարդելու իր պապի հիշատակին նվիրված այս ժողովածուն, որի նախօրինակը հավանաբար ունեցել է իր ձեռքի տակ։ Այս տեսակետից կարևոր է Գ. Լևոնյանի հաղորդած տեղեկությունն այն մասին, որ Նաղաշ Հովնաթանը իր կյանքի վերջում մտածել է ամփոփել իր բոլոր գրվածքները մի տաղարանի մեջ, զարդարել տալով իր որդուն՝ Հակոբ Նաղաշին, նվիրելու համար փոքր տղային՝ Հարությունին։ Գ. Լևոնյանը գրում է. «Ո՞ւր է գտնվում այժմ այդ ունիկումը՝ հայտնի չէ, բայց նրանից անշնորհք կերպով կատարված մի ընդօրինակությունը կար մեր անձնական գրադարանում։ Ահա հիշատակարանը.

Ես տրուպ Նաղաշ Յովնաթան,
Գծագրեցի զայս տաղարան,
Խաղ և տաղեր աղնուական,
Խրատք և խօսք ծիծաղական,
Ձեռամբ որդւոյս իմ Յակոբայն,
Պատկերներով տնօրինական
Նաղկօք և թուչնօք զանազան,
Ի վայելումն Յարութեան,
Փոքր որդւոյն իմ սիրական[22]։

---

17 ՄՄ, ձեռ. 4426, էջ 88բ։

18 ՄՄ, ձեռ. 1920, էջ 149բ։

19 ՄՄ, ձեռ. 1533, էջ 190բ։

20 ՄՄ, ձեռ. 9029, նկ. 10։

21 Գ. Լևոնյան. Հովնաթանյան Նաղաշները հայ նկարչության պատմության մեջ.— Խորհրդային արվեստ, 1938, 2, էջ 28։

22 Նույն տեղում, էջ 26։ Օրինակը՝ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, հայ աշուղների ֆոնդ, 19, թ. 11։

Եղիշե Մարտիկյանի կատարած մանրազնին ուսումնասիրությունը նրան բերել է այն համոզման, որ Հովնաթան Հովնաթանյանի գործերում ակնհայտ է նրա հոր՝ Հակոբի ազդեցությունը, իսկ վարպետության մակարդակով՝ ավելի մոտ է պապին՝ Նաղաշ Հովնաթանին[23]։ Մանյա Ղազարյանը նույնպես այն կարծիքին է, որ Հովնաթան Հովնաթանյանի «Ննջումն Աստվածամոր» պատկերի ոճական, պատկերագրական ու գունային համադրման մեջ նկատելի է նրա հոր ու պապի ազդեցությունը[24]։

Որպես ճանաչված նկարչի, 1769 թ. Սիմեոն Երևանցի կաթողիկոսը Հովնաթան Հովնաթանյանին հրավիրել է տաճարի համար նկարազարդումներ կատարելու։ Այնուհետև Հովնաթանին տեսնում ենք մեկ Տփխիսում, մեկ՝ Էջմիածնում (1769—1784 թթ.)։ Նշանակում է հնարավոր է, որ նա նկարազարդած լինի Հայրապետի ընդօրինակած 1765 թ. ժողովածուն։

Բոլոր դեպքերում, Հովնաթանյան սերնդի ստեղծած ձեռագիր մատյանների շարքում այս ժողովածուն իր որոշակի տեղն ունի, որի շնորհիվ Հովնաթանյան տոհմածառը հարստանում է նոր անուններով. դրանք Հովնաթանի ավագ եղբոր՝ Մարգարի որդիներն են՝ դպիր և ծաղկող Հայրապետը և նրա կրտսեր եղբայրը՝ Հակոբը՝ Նաղաշ Հովնաթանի տաղարանի ընդօրինակողները։

---

23 Ե. Մարտիկյան. Հայկական կերպարվեստի պատմություն. Հ. Ա. 17—19-րդ դդ. Երևան, 1971, էջ 106։

24 Մ. Ղազարյան. Նոր էջեր նկարչի կյանքից.—«Սովետական արվեստ». Երևան, 1968, № 5, էջ 57։